Հայտարարություն

Արցախի պետական համալսարանը ս.թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 12-ը կազմակերպում է 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի ընդունելության փաստաթղթերի ընդունումը հետևյալ կրթական ծրագրերի գծով.

1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
2. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
3. Պատմություն
4. Հայոց լեզու և գրականություն
5. Ռուսաց լեզու և գրականություն
6. Կենսաբանություն և քիմիա
7. Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
8. Իրավագիտություն
9. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Դիմորդները պարտավոր են ներկայացնել

1. միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 4 լուսանկար (3X4 սմ չափսի),
3. անձը հաստատող փաստաթուղթ, (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական), սոցիալական քարտ (պատճեն),
4. զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունն անցնելու մասին (արական սեռի ներկայացուցիչների համար),
5. սոցիալական վիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում),
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում),
7. տվյալ և նախորդ տարվա միասնական քննությունների վկայագիր (առկայության դեպքում):

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել

047-95-09-47, 097-25-25-50 հեռախոսահամարներով: